

**ԴԻՄՈՒՄ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ՈՒԹ Ն ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ  
ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ  
ԳՆԴԱՊԵՏ ՏՈՆՈՅԵԱՆԻՆ**  
Երեւան, Հայաստան

Ժիրայր Սէֆիլեանի Պաշտպան Յանձնախումբէն  
Պէյրուզ, Լիբանան

Յարգարժան պարոն գնդապետ,

Ժիրայր Սէֆիլեանի Պաշտպան Յանձնախումբը կը դիմէ Ձեզի, որ ազատ արձակեք ձեզ մօտ արգելափակուած՝ Ղարաբաղեան պատերազմի ամենաանուանի հրամանատարներէն, ԼՂՅ Մարտական Խաչ Ա. կարգի շքանշանակակիր, հայկական զինուած ուժերու պահեստի փոխգնդապետ Ժիրայր Սէֆիլեանին:

1990-1996 ժամանակաշրջանին, թէ Արցախեան պատերազմի ընթացքին եւ թէ անկէ ետք՝ Արցախի բանակի կառուցման ժամանակ, բոլորը ծանօթ են ցանկացած հայու միայն պատիւ բերող Ժիրայր Սէֆիլեանի ծառայութեան՝ հայրենիքին, ազգին ու պետութեան: Ժիրայր Սէֆիլեանը, 23 տարեկան հասակին, եղած է կամաւորական՝ հիւսիսային Արցախի ինքնապաշտպանութեան կռիւներուն, ղեկավարած է Հայաստանի եւ սփիւռքի կամաւորականներու միաւորներ՝ ԼՂՅ զանազան շրջաններու մէջ տեղի ունեցած մարտական գործողութիւններու ժամանակ, հրամանատարը եղած է Ատրպէյճանի դէմ փառապանծ յաղթանակներ արձանագրած ԼՂՅ պաշտպանական բանակի Շուշիի առանձնակի գումարտակին, ապա ծառայած է որպէս ՊԲ դիվիզիայի փոխհրամանատար եւ ԼՂՅ ճրդ պաշտպանական շրջանի հրամանատար:

Ան արժանացած է ԼՂՅ Մարտական Խաչ Ա. կարգի շքանշանի, բանակային եւ պետական զանազան պարգէներու, վերադաս հրամանատարներու անվերապահ գնահատանքին եւ ժողովրդային լայն համակրանքի՝ թէ Արցախի, թէ Հայաստանի եւ թէ Սփիւռքի մէջ: Վերջինիս համար մանաւանդ Ժիրայր Սէֆիլեանը միշտ հանդիսացած է հայ մարդու օրինակելի կերպար, հայրենասիրութեան, ընկերասիրութեան, զոհողութեան, բարոյական անեղծ նկարագրի, սկզբունքայնութեան, անկաշառութեան, օրինապահութեան, պատասխանատուութեան եւ ազգի գերագոյն շահերուն հաւատարիմ մնալու իր յատկանիշներով:

Մենք վստահ ենք, որ Ժիրայր Սէֆիլեանի ազատ արձակումը կրնայ միայն օգտակար դառնալ քննութեանը այն գործին, որուն շրջանակներուն մէջ ան ձերբակալուեցաւ: Կը հաւաստիացնենք Ձեզի, որ այս վստահութիւնը կը բաժնեն տասնեակ հազարաւոր հայ մարդիկ Լիբանանի հայ համայնքին մէջ եւ ամբողջ Սփիւռքի տարածքին:

Կը յուսանք, որ դրական լուծում կու տաք այս դիմումին:

Յարգանքով՝

Ժիրայր Սէֆիլեանի Պաշտպան Յանձնախումբ (Լիբանան)

Հայրանուն ..... Անուն .....

Ստորագրութիւն

Իմայլ .....